

5. ՔԱՋԱՆՑ ԹԱԳԱՎՈՐԻ ՏՂՈՒ՝ ՈՒՍՈՒՖ ՉԵԼԵՊՈՒ ՀԵՔԻԱԹ

*Ուսուֆ Չելեպին քաջանց թագավորի տղեն էր. օր մը չըմ գ/ինա մեր ինչ կասե ուրեն, կըռակի՝ հ'ու՞ր իս ղարեպութին, էկա քի։ Կիգա թագավորին կէղնի պոսթնճի։ Էդ թագավորին էլ երեք աղչիկ կեր ու ուրանց կարգվելու ժամանակ ընցեր էր։ Թագավորը չկարգեր ղուրանք, աղչիկներ կտեսնան օր ուրանց հեր զինք հոն չղնե, ու ուրանք երթալով կլոսնան, մնան գետին, կբերեն երեք լըզկուկ ձմերուկ, մեկ-մեկ չախու կզարկեն մեջ ու կճամբեն՝ երթա թագավորին. սատրազամ լե թագավորի խեչ նստուկ կէղնի։ Երբ զձմերկներ կբերեն, թագավոր կասե.— Բերեք զէդ ձմերկներ, կտրենք, ուտենք։

Սատրազամ կվերցու ասե.— Թագավոր ապրած, զէդի ուտելու համար չըն ճամբեր ի, էդ երեք ձմերուկ քու երեք աղչիկներ ին, էն ձմերուկ որ օր հասեր է ու տեղ պը տեղ լզկեր է, էնի քու մեծ աղչիկն է, էնտոր կարգվելու ժամանակ ընցեր է. մեկել օր հասեր է ու էղեր է ուտելու՝ էն լե միչնեկ աղչիկն է, էնտոր թամ կարգվելու ժամանակն է. իսկ մեկել օր նոր է առի հասնել, էն լե քու պզտիկ աղչիկն է. էնտոր կարգվելու ատենն էլ մոտենալու վրա է։

Թագավորի խելք լե պառկավ սատրազամի ըսածներուն, ճարճի տվեց կանչել թե՝ ինչքան ազապ տղա որ կան քաղքի մեջ, հ'իգան ընցնին թագավորի խաս պաղչի առջևեն, աղչիկներ լե կանեն փանչարեք, վերն որ խնձոր զարկեն՝ առնեն զէնի։

Մեծ աղչիկ զուր խնձորը զարկեց թագավորի սատրազամի տղին, առավ զէնի, մեջինեկ՝ թագավորի լալի տղին, պզտիկն էլ զուր խնձոր, շը՛րըփ, ուր հոր քաշալ պոսթնճու գլխուն, առավ զէնիկ։ Քուրվըտիք

Հ՛ըմնօր.ուրանց քուրջ երես կիտեն. «Դետին սուտ, գնաց՝ էկավ քաջալ պոսթնճին առավ»։

Հընցավ ժամանակ մը, թագավորը հ՛ընկավ ջլերը ծանր հիվանդ, լողման կբերեն թագավորի վրեն, կասե.— Եթե առյուծի կաթ, առյուծի ձգու տկի մեջ չըլնան բերեն, թագավոր զկաթ խմե, զտիկ լե էնե փոսթ, քաշե հ՛ինք ուրեն՝ սաղնալ չկա։

Թագավորի փեսեք երբ լսեցին զէդի, ասին.— Մենք կերթանք բերենք առյուծի կաթ՝ առյուծի ձգու տկու մեջ։

Հեծան մեկ-մեկ ջահել ձիու, հ՛ընկան ճամբեն։ Պզտիկ քուր գնաց ասաց.— Ձի մը լե ձըր փեսին տվեք՝ հեծնի էրթա։

Քուրվըտիք ծիծղացին վրեն.— Ձմտնի գետին ինք ու ուր քաջալ էրիկ, էն լե մարդ է էղի՝ էկեր է ձի կուզե։

— Քա, դուք ի՞նչ կուզեք,— ասաց պզտիկ քուր ուր քուրվըտոց,— Քաջալ կեղնի թըղ էղնի, իմ էրիկ չէ՞։

Ասեն.— Գնա, հավթու տկու էն ծըռտոտ ու թոպալ ձին առ, գնաս։

Քաջալ փեսեն հեծավ զծռտոտ ձին, ժանգոտ թուր մը լե կախեց կշտեն՝ լընկ ու տըռչ, հո՛ւ հո՛ւ պոռալով եաւեն, պզտիկները փշքուլ զարկելով՝ հանին քաղքեն դուրս։ Երբ որ էլավ քաղքից դուրս, թոփալ ձին չըքըցուց, տըլի մեջ, հրեղեն ձիու մաղ քաշեց, զարկեց կրակ, հրեղեն ձին կանավ առեջ, հանեց զուր քաջվենի հալվընները, հեծավ զհրեղեն ձին, թուր կախեց կշտեն ու քշեց։

Շատ գնաց, քիչ գնաց, մարդու մը ռաստ էկավ օր մուրի-մուրի էս սարերը կօլըրտեր։ Տեսավ զտղեն մինակ, ասաց.—Տղա, դու հ՛որի՞ն ես հ՛ընկի էդա սարերը թաք, ի՞նչ կօլըրտիս։

Քաջալն ասաց.—Թագավոր հիվանդ է, առյուծի կաթ. առյուծի ձգու տկի մեջ դեղ ցուցուցեր են, էկեր եմ առյուծի կաթ կտանեմ։ ... ...

— Օր հըմալ է, լաո, կանի քզի բան մը կասեմ. սորա գնա օլըրտի. հանդե առյուծի ոտք էղեր է քարխեծ, պառկուկ ֆլան սարու գլուխ, պալու տակ ու կպոռա ուր օտնեն. ուրեն հ՛ալենք չելնիս, քարու մը տակ կպատվտիս, ղարկես, ըռհաթելեն վերջ, երբ օր հ՛ելնիս հ՛ալենք, ինչ օր ուզես՝ կիտաս։

Տղեն քշեց զհրեղեն ձին ու անվերի սարու մը գլուխ կանավ։ Հեռվանց տեսավ օր առյուծ ընկեր է լընճոկի ու կմռա. տղեն քարու մը տակ տափավ ու զուր նետվանեղը քաշեց, գնաց քիսավ առյուծի ոտք. ձեն մը հանեց, աստված ինք նշանց չի տաս Ասաց առյուծ.— Էդոր զարկող էլներ իմ հ՛ալենք՝ ավս կտորը անկաճ կթողեք։

Երբ օր քիչ մը ըռհաթավ, ըստհաղ փոխեց ուր խոսք, ասաց.—Էդոր զարկող էլներ իմ առջև, ինչ որ ուզեր՝ կիտենք ու աղեկին աղեկ կելնենք։

Տղեն քիչ կանավ առյուծի առաջ.—Ջքու ոտք ես իմ զարկի։

— Ուզե, իտամ,— ասաց։

— Բան մը չեմ ուզի, զքու կաթ քու ձգու տկի մեջ կուզեմ, իտաս էրթամ։

— Հա՛յ հա՛յ, քու սորվեցնողի վիզ կոտրի, օր հըմալե, առ զիմ ձագ, տար անվերի սարու մը գլուխ մորթե, ձեն չընկնի իմ անկաճ, հ՛ընկնի՝ ոքու մեծ կտոր անկաճ կթողե՞մ, հանե տիկ, րի, զիմ կաթ կթե, առ գնա։

Տղեն տարավ զձագ անվերի սարու մը գլուխ մորթեց, հանեց տիկ, բերեց առյուծի կաթ լցեց մեջ, առավ էկավ տեսավ օր ուր պաճանըխներ հ՛ընկուկ են սարերը ու մուրի-մուրի կօլըրտին։ Ինք ճանչցավ զէնտոնք, էնտոնք չճանչցան վինք. հարցուց ասաց.— Աղըրտանք, դուք ի՞նչ կօլորտիք էդա սարեր։

Ասին.—Թագավոր հիվանդ է, առյուծի կաթ ուր ձագու տկի մեջ դեղ ին ցուցուցի, էկեր ենք կտանենք։

— Ասաց— Իմ մոտ կա, դուք հ՛ո՞րի կօլըրտիք։

— Որ քու մոտ կա,— ասին Թագավորի էրկու փեսեք,— տուր մզի, տանինք, ինչ օր կուզես՝ կիտանք։

Տղեն ասաց.— Ես փարով մարդու բան չըմ իտա, ընծիկ առաթ մը կա, վերն օր բան իտամ, մեկ-մեկ տաղմա կզարկեմ էնտոնց ճակտի վրեն. կուզեք՝ մեկ-մեկ մատնիկ լե ձըր ճակտի վրեն կզարկեմ, կիտամ առյուծի կաթ առյուծի ձգու տկի մեջ, առնեք էրթաք։

Թագավորի փեսեք ասին.— Ֆասի տակ ո՞վ կտեսնա զմըր ճակտի տազմեն, քըզ զարկե, ի՞նչ կա։

Տղեն մեկ-մեկ մատնիկ զարկեց էնտոնց ճակտի վրեն, առան զառյուծի կաթ ու դարձան էկան տուն, տարան դրին Թագավորի առջև, ըսին.— Մենք ենք բերի։

Քաջալն էլ էկավ չրի պռուկ, ուր թորկեր էր զուր ձին. զարկեց հրեղեն ձիու սաղրուն, հրեղեն ձին գնաց չրի մեջ, հագավ զուր քաջլվենին, հեծավ զծըռտոտ ձին, լըխոռ-չրխոր էկավ մտավ քաղքի մեջ, ամեկ դիեն սկսան հո՛ւ հո՛ւ պռռալ, փշքուլ զարկել, մինչև օր էկավ մտավ ուր տուն։ Կնիկ բերեց զձին Թասլիմ էրեց հոր տուն, ամեկ դիեն քուրվըտիք առան վրեն.— Մտի գետին դու ու քաջալ էրիկ, կեոյա էդ լե մա՞րդ էր, գնաց բան բերեց։

— Աղեկ, հ՛որի՞ կպատռիք,— ասաց պզտիկ քուր,— իմ էրիկն է, ձզիկ ի՞նչ, ձըր էրկտիք քերեցին, մզիկ հերիք է։

Թագավոր խմեց առյուծի կաթ, փոսք լե քաշեց հ՛ինք՝ աղեկցավ։

Ընցավ ժում ու ժամանակ մը, Թագավոր նորեն հիվընդցավ, էդ հաղ ըսին, եթե անմահության ջուր ու խնձոր չէղնի, զխնձոր ուտե ու զջուր

խմե, կմեռնի։ Փեսեք ասին.— Մենք կէրթանք, բերենք անմահութեան ջուր ու խնձոր։

Հեծան մեկ-մեկ ջահել ձի ու քշեցին։

Պդտիկ քոյր էմէն գնաց, ասաց.—Ձի մը լե ձեր փեսին տվեք՝ թըղ հեծնի էրթա։

Քուրվըտիք հասան ուրանց քուրոջ վրեն.—Քա, մտի գետին դու ու քու էրիկ, ինչքան օր գնաց առյուծի կաթ բերեց, էնքան ալ անմահութեան ջուր ու խնձոր պիտի բերի։

Մեկ լե տվին զթոպալ ձին, հեծավ, հալահուլեսներու մեջեն էլավ քաղքից դուրս. գնաց գետի պռուկ, զուր ձին թողեց հոն, մազ զարկեց կրակ, էկավ հրեղեն ձին, հրեղեն հալավ ու թուր վրեն, հանեց զքաջրվենին. հագավ ղհրեղեն հալավ ու հեծավ ղհրեղեն ձին, քշեց։ Շատ գնաց, քիչ գնաց, մարդու մը ռաստ էկավ, օր սարեր կօլըրտեր, ասաց.— Տղա՛, ո՛ւր կերթաս, ի՞նչ կօլըրտիս էդա սարեր։

Ասաց.— Թագավոր հիվանդ է, անմահութեան խնձոր ու անմահութեան ջուր դեղ ցուցուցեր են, էկեր եմ կտանիմ օր ուտե, սաղնա։

— Տզա, աստված քո հետ էղնի, օր կէրթաս, բայց կանի քզիկ բան մը ասեմ. կէրթաս էլնիս անմահութեան պաղչեն, անձեն ու անձուն կքաղես խնձոր, չուր կո՛ըլնաս կառնես ու դառնաս, հանդե քար ու փետ կպռռան. «Հողեղեն տարավ զհրեղեն, հողեղեն տարավ զհրեղեն». ձեն չհանես, հետ չդառնաս իշքիս, կէղնիս քար։

Տղեն գնաց, մարդու ասածի պես լցեց անմահութեան ջուր, քաղեց խնձոր, հեծավ զուր ձին ու քշեց, ետևեն քար, փետ, հող ու ջուր կպռռեն. «Հողեղեն տարավ զհրեղեն, հողեղեն տարավ զհրեղենս. տղեն ձեն ու ձուն չհանեց ու ետև լե չիշեց, մինչև օր էկավ հ՛ընկավ աստվորի աշխարհ։ Էկավ, ռաստ էկավ էրկու ձիավորի, տեսավ օր սարեր կօլըրտին, ինք ճանչցավ զէտոնք, էնտոնք չճանչցան զինք։ Հարցուց էնտոնցնեն թե.— Դուք հ՛որի՞ կօլըրտիք էդա սարեր։

Ասին.— Թագավոր հիվանդ է, անմահութեան ջուր ու խնձոր ցուցուցեր են դեղ, էկեր ենք կտանենք։

Տղեն ասաց.— Անմահութեան ջուր ու խնձոր իմ մոտ կա, բլե փարով չըմ իտա. ընծիկ ատաթ մը կա, վիրեն օր բան իտամ, իմ ձիու նալով մեկ-մեկ տաղմա կզարկեմ էնտոր լեշի վրեն։

Թագավորի փեսեք իշքին իրարու երես, ու ասին.— Ի՞նչ կա, լեշի վրեն ո՞վ կտեսնա. թող զարկե, իտա անմահութեան ջուր ու խնձոր, առնենք էրթանք։

Տղեն մեկ մեկ տաղմա զարկեց թագավորի փեսեներու լեշի վրեն, տվեց անմահութեան ջուր ու խնձոր, առան դարձան էկան տուն, քաշալ լե էկավ գետի պռուկ, զարկեց հրեղեն ձիու սաղերուն, ձին գնաց շրի

մեջ, հագավ զուր քաջլվենին, հեծավ զծրտտոտ ձին, էկավ մտավ ուր տուն, թագավորի աղջիկ տարավ զձին թասլիմ էրեց ուր հոր տուն։ Քուրվըտիք մեկ լե զուրանց քուր զավխի առան. «Ջմտնի գետին ինք ու ուր քաջալ էրիկ, էղեր են աշխրքին ծիծղանելիք, կիգա ձի կտանե, գինա էղ լե մարդ էր» Քուր ձեն չհանեց, դարձավ էկավ ուր տուն։

Ընցավ ժամանակ մը, թագավորի վրեն մոհում ու կռիվ էղավ։

— Ձի մը լե ձըր փեսին տվեք՝ թըղ հեծնի էրթա։

Քուրվըտիք մեկ լե տնազ էրին ու ծիծղացին ուրանց քուրոջ վրեն.— Էրկու անգամ գնաց, շատ հող տվեց ուր արևուն, ըստհաղ էրթա թփռցու։

Չկոտրեցին զուրանց աղջկա խաթեր, թոպալ ձին հազեր է, տվին. առավ գնաց։ Քաջալ հեծավ մեկ լե զծրտտոտ ձին, քշեց չրի պռուկ, մազ զարկեց կրակ, ձին հրեղեն հալվըներ վրեն կանավ առաջ։ Հանեց զուր քաջլվենին, հագավ զհրեղեն հալավ ու հեծավ զհրեղեն ձին, քշեց կռվու մեջ, ինչքան օր ինք չարղեց, էնքան էլ ուր ձին, չանդրկներ խառապ խանի պես լցեց գետին։

Վերջ մախսուս կեոյա դյուշմընի կզարկեր՝ թալեց զքուր, կտրեց զուր ձեռք. թագավոր երբ տեսավ զտղի կտրճութեն ու ձեռքի արուն չռչռալը, հանեց զտասմալ, տվեց տղին, կապեց զուր ձեռք։ Երբ կռիվ ֆռզան, քաջալն է՝ քշեց հրեղեն ձիով, էկավ ուր տան դուռ իջավ, պեն մը մնաց. հարձկեց զձեռք, տվեց զտասմալ կնկան, ասաց.—Աո զքու հոր տասմալ, տար տուր հ՛ինք, կռվու մեջ ձեռքս կտրավ, տվեց, կապեցի ձեռքս։

Աղջիկ առավ զտասմալ, տվեց հոր, հեր հարցուց աղջկաց.—Աղջի, էդ տասմալ կապուկ էր քու փեսի ձեռք. ասել է՝ էն կտրիճ տղեն օր կռիվ կէներ, քու էրի՞կն է, հա՛. ո՞ւր է, գացեք կանչեք թող գա՝ իշենք։

Աղջիկ ասաց.— Դաղրուկ է, էկեր է պառկի։

Թագավոր անկաճ չէրեց, ճամբեց բերեց, տեսավ հախիխաթ էն տղեն է, օր ինք տասմալ ավեր է կապեր է ուր ձեռք. թագավոր ասաց.— Մատամ օր գու հրմլա կտրիճ տղե մըն էր, առյուծի կաթ ու անմահութչան ջուր հ՛որի՞ չբերիր, մեկել փեսեք բերին։

Տղեն ասաց.— Ո՞վ կասե, որ քու մեկել փեսեքն ին բերի, ընծի նչան կա էնտոնց վրեն, բացեք տեսեք։ Առյուծի կաթ ձգու տկի մեջ երբ բերի տվի ուրանց, իմ մատնըկով մեկ մեկ տաղմա զարկեր իմ ուրանց ճակատի վրեն. անմահութչան ջուր ու խնձոր լե օր տվի՝ իմ ձիու նալով մեկ մեկ տաղմա վըր լեչի ուրանց իմ զարկի, չեք հավտա՝ բացեք, տեսեք։

Բացին, տեսան օր ուղորդ է տղի ասածները։

Էնտոր վրեն քուրվըտիք կպատռեն ուրանց քուրոջ ու մըհանե մը կփնտռեն, օր զուրանց փեսեն կորցնել իտան.—Քա, մտի դետին, օր հմալե, էլ հ՛որի՞ն իս էղի աշխըրքին ծիծղանելիք։ Դիշեր օր կէղնի,

կհանեն զուր քաջվինիք, պառկի քնի՝ դու լե վերցու թալ կրակի մեջ,— ասին ուրանց քուրջ։ Պզտիկ քուրջ խելք լե պառկավ։ Գիշեր էրիկ երբ քնուկ էր, վերցուց ղէրկա քաջվենիք ու լըցեց կրակի մեջ. սկսավ ճեն-ճըռտալ. հոտն ղարթնավ էրիկ, էլավ նստավ օր իր հալվընեըն է, կնիկ թալեր է կրակ, փետ մը առավ ձեռք, քթեն արուն հանեց, քսեց ուր շապկի թևը, ու ասաց կնկան.—Մինչև օր էրկթե սոլ չհագնիս, պողպտե գավազան չառնիս ձեռքդ ու զիմ շապիկ լվանաս, հանես զէդա արուն, էլ չըմ հ՝իգա,— լսավ ու գնաց։

Աղչիկ գնաց հոր գանգատ էրեց քուրվըտոց վրեն ու ասաց.— Ընծիկ չուխտ մը էրկթե սոլ, պողպտե գավազան մը շինե, կէրթամ իմ էրկա էտևեն։

Ինչ էրին՝ չկըրցան խոսք հասկցնել։ Հագավ չուխտ մը էրկթե սոլ, պողպտե գավազան առավ ձեռք ու հ՝ընկավ ճամբա։

Շատ գնաց, քիչ գնաց, տեսավ օր ծովու մը պռուկ երեք աղչիկ նստուկ ին, շապիկ մը կլվանան ու թևի վրայի արուն չըն կրնա հանել։ Գիտցավ օր Ուսուֆ Չելեպու շապիկն է, առավ ձեռքերնեն, լվաց ու զարուն հանեց։ Աղչիկներ առան շապիկ, դարձան էկան տուն, ինք լե հ՝ընկավ հ՝ետևնեն, էկավ մտավ տուն, ուր սոլեր լե առեր են ծակիլ։ Ուսուֆ Չելեպին օր տեսավ, գիտցավ օր ուր կնիկն է էկի։ Մեր տեսնելու պես՝ որովհետև քաջանց էր, ճանչցավ զՈւսուֆ Չելեպու կնիկ ու ասաց.—Հար հ՝էսօր ասել է զիմ տղեն դու էր, չըր Թողեր հ՝իգեր։

Դրեց քառսուն տևա բուրդ թագավորի աղչկա առաջ, ասաց.—Զիմ Ուսուֆ Չելեպին կկարգեմ, յորղան-դոշակ պիտի շինեմ, կտանես զէդա բրդեր գետ՝ կլվանաս, սպիտակ կսեցուս, սև կսպիտկցուս, կառնես կիգաս։

Կնիկ սևավորավ նստավ։ Ուսուֆ Չելեպին դրսեն էկավ, տեսավ կնկա մատեն էրուկ, նստեր է կիլա. գիտցավ բան մը կա, հարցուց.—Աղչի, հ՝որի՞ կիլաս։

Ասաց.—Քու մեր տվեր է ինձ քառսուն տևա բուրդ և ասեր է. զՈւսուֆ Չելեպին կկարգիմ, տար սպիտակ տևցու, սև սպիտկցու, առ ու էկո։

— է՞դ է, էդի հեչ, տար լվա, սպիտակ քիսե տևի ամնի մեջ, սև լե՝ սպիտկի ամնի մեջ, առ ու էկո։

Աղչիկ էրկա ասածի պես էրեց, տարավ լվաց, առավ էկավ պառավ գիտցավ օր տղեն է սորվեցուցի, ասաց հարսին.—Ակխսան, ակմակխսան, Ուսուֆ Չելեպի օրկանմիշսան*։

Էդ անգամ ասաց.—Կերթաս քառսուն տևի բեռ հավքի թեփուր կժողվիս, բերիս, օր զիմ Ուսուֆ Չելեպին կարգեմ։

---

* Ուսուֆ Չելեպիից ես սովորել (Թ. Կ.)։

Կնիկ մեկ լե էրեց զուր մատեն, նստավ։ էկավ Ուսուֆ Չելեպին, տեսավ օր կնկա մատեն վրեն չէ, հարցուց, ասաց.—Մեկ լե Ո՛որի՞ն իս էրի զքու մատեն ու նստեր ես, կիլաս։

Ասաց.— Ես չիլամ, ո՞վ իլա. քու մերը հըմլա է ասի։

— Ջանըմ, է՞դ է, էդի հեչ, ելի գնա գետ, էնտեղ քընտի չար մը կա, նըստի վըր քարուն, քու ծամեր փռե ու ասա. «Վո՛ւյ, Ուսուֆ Չելեպին է մեռի, վո՛ւյ, Ուսուֆ Չելեպին է մեռի»։ Հանդե ինչքան հավքորենք կան, կիգան զուրանց թեփուր կթալին Ո՛ոնի ու կէրթան, դու լե ելի, լից բեռներ, առ էկո։

Թագավորի աղչիկ էրկա ասածի պես էրեց, պառավ գիտցավ օր տղեն է սորվեցուցի. «Մեկ լե Ուսուֆ Չելեպին է սորվեցուցի զքզիկ, կանի տես ինչ էնիմ քու գլուխ»։ Ասաց.— էդա քառսուն կարաս արտսունքով կՈ՛ըլնաս, նոր զիմ տղեն կկարգիմ, թե չէ՝ չըմ կարգի։

Թագավորի աղչիկ մեկ լե սևավորավ, նստավ, էկավ Ուսուֆ Չելեպին, տեսավ կնիկն զմատեն էրեր է, նստի, ասաց.—Մեկ լե Ո՛որի՞ն իս մըռթի, նստի։

Ասաց.— Քու մեր հըմլա է ասի։

Ուսուֆ Չելեպին ասաց կնկան.—Ելի ջուր կրե, լից քառսուն կարսի մեջ, վերչ մեկ մեկ բուռ աղ լե բի՝ լից մեջ ուրանց, խառնե, հընտե կէղնի արտսունք, կէրթա։

Կնիկ էդ լե էրեց. պառավ էկավ՝ հերսոտավ վրեն, ասաց.—Մեկ լե զքզիկ Ուսուֆ Չելեպին է սորվեցուցի։ Կանի տես ինչ օղյաթ կհանիմ քու գլուխ,— ասաց ու գնաց։

Էտոր վրեն Ուսուֆ Չելեպին ասաց կնկան.—Գինա՞ս, հանաե պառավ զակռեք սրեր է օր զքզիկ ուտե. թատարուկ տես, օր առնենք զիրար փախնենք, թե չէ՝ ճար չկա. ելի քու ծամերով զթարանճի մատներ ավլե, բաց դուռ տիր, զդրուկ դուռ լե բաց, զդմակ վերցու օչխրի առջևեն՝ դիր գիլու առջև, զխոտ լե գիլու առջևեն վերցու, դիր օչխրի առջև։

Կնիկ էրկա ասածի պես զէդ Հ՛ըմեն էրեց, լուսուն օր էղավ, էլան առան զիրար ու փախան։

Պառավ պոռաց.—Թարանճա՛, թարանճա՛, բռնե զՈւսուֆ Չելեպին ու ուր կնիկ։

Թարանճեն ասաց.— Քառսուն տարե օր զիս չեն ավլած են, էնի ուր ծամերով ավլեց. իջավ գնաց, Հ՛որի՞ բռնիմ։

— Դո՛ւռ, դո՛ւռ, բռնե։

Պառավ ասաց.— էդա քառսուն տարե ես իմ միջաց վրեն թիք բաց ենք, մեկ չըր ֆքրեր դներ, էնի զիս դրեց, մեկել դուռ լե բացեց ու ընցավ գնաց, Հ՛որի՞ կբռնենք։

— Օչխա՛ր, օչխա՛ր, բռնե։

Օչխար ասաց.— Էդա քառսուն տարե դմակ դրուկ էր իմ առջև, խոտ՝ կ'ուտուն, հըմկա խոտ իմ առջևն է, դմակ լե՝ դիլուն, քոռցե՞ր եմ ես կբռնեմ։

— Գե՛լ, դե՛լ, բռնե։

Գել ասաց.— Էդա քառսուն տարե խոտ դրուկ էր իմ առջև, դմակ՝ օչխորին, հըմկա դմակ իմ առջևն է, խոտ՝ օչխրին, աստված է առի բռնե՞մ։

Պառավ տեսավ օր չկրցավ զՈւսուֆ Չելեպին ու ուր կնիկը բռնել, չանդարդի էղավ, էլավ թուղթ մը դրեց ուր քուրոջ, թե. «Հանդե Ուսուֆ Չելեպին ու ուր կնիկ առած են ձիրար փախած են. էդ դիով կիգան ընցնեն, բռնե դարձու»։ Մորքուր զթուղթ առնելու պես էլավ հ'ընկավ քուլոջ տղի ու հարսի ետևեն։ Երբ քիչ մի գնաց, Ուսուֆ Չելեպին կռահեց օր մորքուր ուր ետևեն կիգա, կնկան ասաց.—Փըմփ խաթուն, փըմփլոշ խաթուն, օլրի իտեդ, տես էն ո՞րն է կիգա։

Կնիկ իչքեց ետևն ու ասաց.— Ինք մժիկ, մժիկ մը լե հեծուկ է վրեն, կիգա։

Քիչ լե գնաց, մեկ լե ասաց կնկան.—Փըմփ խաթուն, փըմփլոշ խաթուն, օլրի իտեդ, տես էն ո՞րն է կիգա։

Դարձավ ետև ու ասաց.—Ինք տև մը, տև մը հեծուկ է վրեն, կիգա։

— Էնի իմ մորքուրն է օր կիգա, մըր ետևեն է հ'ընկի, հանդե ես կէղնիմ պոսթան, դու էղի պոսթնճի, առ զթիակ ձեռքդ ու կանի պոսթնի գլուխ, կիգա կհարցունե քինե. «Պոսթնճի, պոսթնճի, էդա դիով մարդ մը ու աղչիկ մը ընցեր են»։ Դու ասե. «Առչի չուր տվեր եմ, վերչի չուր նոր կիտամ»։ Երեք անգամ կհարցու, զէդ պատասխան տուր՝ կթողե էրթա։

Էրկա ասածի պես Ուսուֆ Չելեպին էղավ պոսթան, կնիկ լե էղավ պոսթնճի, առավ զթիակ ձեռք ու կանավ պոսթնի գլուխ։ Պառավ երբ մոտեցավ պոսթնին, հարցուց.— Պոսթնճի, պոսթնճի, մարդ մը ու կնիկ մը էդա գիով չընցա՞ն։

Պոսթնճին ասաց.— Կեսօրվա չուրը տվեր եմ, հ'իրկվան նոր կիտամ։

Երեք անգամ հարցուց, երեք անգամ լե պատասխան տվավ պոսթընճին։ Պառավ հերսոտավ.— Քուխակ, ես ինչ կասեմ, ինք՝ ինչ կասե։

Թողեց դարձավ ետ ու քուրոջ ասեց թե. «Ես մարդ չտեսա, մենակ պոսթնճի մը տեսա, էդա հըմկա ճուհապ տվեց»։

— Հա՛յ, քու աչք քոռներ, էնի Ուսուֆ Չելեպին ու կնիկն են, թուռե մը փըրցուցներ, բերեր հետդ, հետդ կիգեն։

Ըստհաղ մեկել քուրոջ թուղթ գրեց, թե՝ «Ուսուֆ Չելեպին ու ուր կնիկը առած են ձիրար, փախած են, էդ դիով կիգան ընցնեն, բռնե դար-

ձուս։ Մորքուր թուղթ առնելու պես էլավ, ընկավ քուրոջ տղի ու Հարսի հետևեն։ Ուսուֆ Չելեպին հեռվանց տեսավ օր մորքուր ուրանց հետևեն կիգեր, կնկան ասաց.—Փըմփ խաթուն, փըմփլոշ խաթուն, դարձիր իտևդ, տես էն ո՞րն է կիգա։

Կնիկ դարձավ հետ ու ասաց.— Ինք մժիկ, մժիկ մը լե հեծուկ է վրեն ու կիգա։

Քիչ մը գնաց, մեկ լե ասաց կնկան.— Փըմփ խաթուն, փըմփլոշ խաթուն, դարձի իտևդ, տես էն ո՞րն է կիգա։

Իշքեց հետև ու ասաց.—Ինք տև մը, տև մը լե հեծուկ է վրեն, կիգա։

Տղան ասաց.— Էդ լե իմ մեկել մորքուրն է, ընկեր է մըր հետևեն։ Ես կէղնիմ մինարե մը, դու լե էլի մոլլա մը, ելի կանի վրեն ու պոռա, հանդե կիգա կհարցու. «Մոլլա՛, մոլլա՛, տղե մ՝ ու աղչիկ մ՝ էդա դիով չըն ընցե՞ր ի. դու ասա՝ կեսօր կանչեր եմ, վերջինք դրա չըմ կանչեր իս։ Հանդե կթողե, էրթա։

Էրկա ասածի պես Ուսուֆ Չելեպին էղավ մինարե մը, կնիկ լե մոլլա մը էղավ, կանավ վրեն։ Երր մորքուր էկավ մոտեցավ ուրանց, ասաց.— Մոլլա, մոլլա, կնիկ մը ու տղե մը դետավեր չընցե՞ր ի։

Մոլլեն ասաց.— Կեսօր տվեր իմ, վերջինք դրա չըմ տվեր ի։

Երեք անգամ հարցուց, պատասխան ձէդ էղավ, թողեց դարձավ հետ, քուրոջ ասաց թե.— Մարդ չտեսա, մինակ մինարե մը տեսա, մոլլեն կանուկ էր վրեն, հարցուցի՝ հըմլա ասեց։

Քուր ասաց.— Քու վիզ կոտրի, մինարեն Ուսուֆ Չելեպին էր, վրեն կեցող մոլլեն լե ուր կնիկն էր, խիճ մը փըրցուներ բերեր հետդ, ուրանք լե քու հետ կիգեին։

Չանդարդի էղավ, ելավ մեր, հ՛ընկավ ճամբեն։ Ուսուֆ Չելեպին տեսավ հեռվանց օր մեր կիգեր, ասաց կնկան.—Փըմփ խաթուն, փըմփլոշ խաթուն, դարձիր իտևդ, տես էն ո՞րն է կիտոթորկե ու կիգա։

Դարձավ իտև, ասաց.— Ինք մժիկ, մժիկ մը լե հեծուկ է վրեն, թոզ ու տյուման կէնե ու կիգա։

Քիչ մը գնաց, մեկ լե ասաց.—Փըմփ խաթուն, փըմփլոշ խաթուն, դարձիր իտևդ, տես էն ո՞րն է կիգա։

Անգամ մը լե իշքեց, ասաց.— Քու մերն է, հեծեր է զձրձում ու կիգա, իմ՞լ էնինք օր ազատինք էդոր ձեռքեն։

Տղեն ասեց—Ինչ լե էղնինք՝ դինա։

Երկուք զխոսքերնին ըրին մեկ, կնիկ էղավ ալուկ մը, Ուսուֆ Չելեպին լե էղավ օձ մը ու փաթվավ ալուկ ու զգլուխ լե հանեց դրեց ալկի վրեն։ Երր մեր էկավ մոտեցավ ալկին, ճանչցավ ու ասաց.—Ուսուֆ Չելեպի, գլխուդ ու արևուդ մեռնիմ, օտներուդ զարկեմ քի կքիսի, գլխուդ զարկեմ՝ քի կքիսի։ Ելի էրթանք։

Օձ երեք անգամ վերցուց գլուխ ու դրեց, շնորհակալ էղավ մորնե, մեր լե ասաց.—Լաո, քանի օր դու՛ հիմնե կփախնիս, ընծի պետք չիս, աստված քու հետ ֆղնի։

Մեր դարձավ ետևանց, Ուսուֆ Չելեպին առավ գուր կնիկ ու ընկավ ճամբա։ Շուտապ գնաց թագավորին, թե՝ էկավ քու փեսեն։ Նոր քառասուն օր հարսնիք բռնեցին, կերան, խմեցին, քեֆ-ուրախութեն էրին։

Էնտոնք հասան ուրանց մուրատին, դուք լե հասնիք ձեր մուրատին։